

## ԺԱՌԱՆԳԱՀԱՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ

8 Յունիս 1997ին տեղի ունեցաւ ժառանգաւորաց Վարժարանի եւ Հնդայարանի դպրոցական տարեշրջանի ամավերջի հանդէսը:

Պատրիարք Սրբազն Հայրը եւ Միաբանութեան անդամները եւ ուսուցիչ ները մուտք գործեցին սրահէն, ժառանգաւոր սաներու «Սիրո ի Սիրո» բայլերգով: Եւ վարժարանի Տեսուչ Բագրատ Արդ. Պուրենէֆեանի բացման խօսքն յետոյ, աշակերտները գործադրեցին երգի, նուազի, արտասանութեան եւ ուղերձի իրենց յայտագիրը:

Զանազան դասանիւթերու մէջ յառաջադէմ աշակերտներ ստացան իրենց մրցանակները Պատրիարք Սրբազն Հօր ձեռքէն, որ իր գոհումնակութիւնը յայտնեց ձեռք թերուած ուսումնական յաջորդութեանց

համար, յիշեցնելով կարեւորութիւնը նկարագրի կերտումին եւ միջազգային Եշանակութիւն ունեցող Սուրբ Տեղաց մէջ ծառայելու կոչումին: Պատրիարք Սրբազն Հայրը իր գնահատանքը արտայայտեց սրահին պատերը զարդարող իւղաներկ եւ չրաներկ արուեստի փորձերուն ցուցահանդէսին համար, որոնք ձեռակերտ աշխատանքներն են ժառանգաւոր սաներուն, ցուցմունքներովը ուսուցիչ Հնդանուեր Արդ. Բարախանեանի:

Հնդայարանէն շրջանաւարտ երեք սարկաւագներ, որոնք երրայերեն մասնաւոր դասընթացի եւս կը հետեւէին, Հայկ Սրկ. Միրզախանեան, Արմէն Սրկ. Խաչատրեան եւ Հայկ Սրկ. Գագազեան, իրենց վկայականները ստացան:

## ԳԱԼՈՒՍ ԿԻՒՂՊԵՆԿԵԱՆ ՄՍՏԵՆԱԴԱՐԱՆ

Մատենադարանի շենքը եւ գիրերու դարանները պետք ունին նորոգութեան եւ նոր սարքաւորումի, եւ գիրերու արդիական մերուտներով դասաւորումի:

Լու Աննելուսէն, պետական գրադարաններու վարիչներէն Տիկին Սիլվա եւ իր նարտարագէտ ամուսինը Խաչիկ Մանուկեան, կամաւորապէս յանձն առած են օժանդակել:

Տէնքին հիմքերուն եւ կառոյցին չափագրութիւնը, փոտոած տախտակէ պատուհաններուն, ջուրի խողովակներուն մաքրագործումը կատարուած է:

25 Յուլիսէն 14 Օգոստոս Սիլվա եւ Խաչիկ, երրորդ այցելութեամբ, Պոստոնէն

գրադարանապետ Առին Սէյնթ Օպին ընկերոց հետ, երկոտասնեակ ժառանգաւոր աշակերտներուն սորվեցնելով, երկու շարաթուան մէջ արձանագրել տուած են ցանկը Հայերէն եւ Անգլերէն թերթերուն, որոնք ծրարներով իրարու վրայ դիզուած էին:

Ծրագրին մաս կը կազմէ մատենադարանին ամրող բովանդակութիւնը համակարգիչի մէջ արձանագրել:

Սիլվա Մանուկեան, 8 Օգոստոսին, իրաւիրեալ հասարակութեան դասախոսեց «Հայ Կանայք, գրագիտութիւն, եւ մատենադարաններ» նիւթին շուրջ:

Ա.